**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ**
**ՈՐՈՇՈՒՄԸ**

**2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ՝ ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 91-րդ հոդվածի 7-րդ մասը՝

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1. ««Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի քննարկումը վերսկսել հետևյալ ընթացակարգով.

1) հիմնական զեկուցողին նախագծի վերջնական տարբերակը և առաջարկությունների ամփոփաթերթիկը ներկայացնելու համար հատկացնել մինչև 10 րոպե.

2) հիմնական և յուրաքանչյուր հարակից զեկուցողի հարցեր տալու և արձագանքելու համար սահմանել հետևյալ ժամանակացույցը.

ա. հարցերի համար՝ մեկական րոպե,

բ. հարցերին պատասխանելու համար՝ մեկական րոպե,

գ. հարցերին և պատասխաններին արձագանքելու համար՝ մեկական րոպե.

3) գլխադասային հանձնաժողովի ներկայացուցչին հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար հատկացնել մինչև 3 րոպե.

4) հայտ ներկայացնելու դեպքում մինչև երեքական րոպե տևողությամբ մեկական ելույթ են ունենում՝

ա. նախագծի վերաբերյալ առաջարկ ներկայացրած պատգամավորները,

բ. խմբակցությունների մեկական ներկայացուցիչները,

գ. Ազգային ժողովի նախագահը, նրա տեղակալները.

5) եզրափակիչ ելույթների համար նախատեսել մինչև 5 րոպե:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

2022 թվական, դեկտեմբերի 16
Երևան

ԱԺՈ - 361 - Լ